



## ՄԱՅՐ ԱԹՈՒ Ա. ԷԶՄԻԱԾՆԻ ԶԵՌԱԳՐԱՏՈՒՆԸ

Մայր Աթոռի ձեռագրատունը հանդիսանում է աշխարհի հնագույն ձեռագրատներից մեկը: Ղապար Փարպեցին գրում է, որ Ե դարում Էջմիածնի Կաթողիկոսարանում եղել է մի գրատուն, որտեղ պահվել են ձեռագիր մատյաններ, հայերեն և հունարեն լեզուներով: Ս. Մեսրոպ Մաջտոց վարդապետի ձեռամբ հայոց գրերի գյուտից հետո, 406 թ. սկսած, գրվեցին հայատառ առաջին գրքերը, թարգմանվեցին Աստվածաշունչը, հունարեն և ասորերեն լեզուներով գրված կրոնական պանապան գրքեր, որոնցով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հիմքը դրվեց Հայաստանում առաջին ձեռագրատուն-գրադարանի:

Տասնևհինգ երկար դարեր շարունակ Էջմիածնում գրվեցին և հավաքվեցին հայերեն ձեռագրեր, որոնք բազում անգամ ենթարկվեցին թալանի և ավերածության: Այդ ձեռագրի մատյաններն ևս ունեցան ստեղծագործ ժողովրդի դժբախտ ճակատագիրը, մինչև հասան մեր օրերի փրկարար ժամանակները:

1939 թ. Ս. Էջմիածնի ձեռագրերը պետական որոշումով տեղափոխվեցին Երևան, որտեղ գտան իրենց վերջին ապահով հանգրվանը, ենթակա պետական հսկողության և կատարյալ խնամքի: Այսօր Երևանի Մեսրոպ Մաջտոցի անվան ձեռագրերի Մատենադարանը հանդիսանում է Ս. Էջմիածնի դարավոր պատմություն ունեցող հաստատության ժառանգորդը և այդ գործի արժանավոր շարունակողը, գիտական մի հաստատություն, որ հայոց գրի ու գրականության, ինչպես նաև հայ մշակույթի ու պատմության մի սրբավայր է:

Հայրենական պատերազմի ավարտից հե-

տո կրկին սկսեցին ձեռագրեր հավաքվել Մայր Աթոռում: 1949—50 թթ. այժմ հանգուցյալ Ռուբեն Դրամբյան և Վահան Կոստանյան սրբապանների ձեռամբ Թեհրանից և Սպահանի հալաբնակ պանապան գյուղերից հավաքված և Ս. Էջմիածնի բերված շուրջ հիսուն ձեռագրերով հիմքը դրվեց Մայր Աթոռի նոր ձեռագրատան: Այս հավաքվեցին և ի մի բերվեցին Մայր Աթոռի արխիվում և պահեստներում, ինչպես նաև Հոգևոր ձեմարանի և հին Վեհարանի գրադարաններում պահպանված ձեռագիր մատյաններ, կոնդակներ և այլ ձեռագրային նյութեր ու պատառիկներ:

Նորին Ս. Օծություն Վապգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի օծուսից մինչև այսօր, անցնող երեսնամյակում, վանքի նորակալմ այս ձեռագրատունն աճեց և մատյանների քանակը բազմացավ հսկայական քայլերով, և այսօր այն հասավ շուրջ 850 միավորի, հանդիսանալով Խորհրդային Միության մեջ երկրորդ մեծագույն հայերեն ձեռագրերի հավաքածուն, Երևանի Մեսրոպ Մաջտոցի անվան նվիրված Մատենադարանից հետո:

Այսօր Մայր Աթոռի ձեռագրատունը բաղկացած է շուրջ 780 ձեռագրերից և 70 պատառիկներից, որոնք հավաքված են Հայաստանի եկեղեցիներից, նվեր ստացված Մայր Աթոռի միաբաններից, քահանաներից և աշխարհիկ մարդկանցից: Արժեքավոր նվերներ են ստացված սփյուռքահայ եկեղեցիներից, հոգևորականներից ու բարեպաշտ ժողովրդից: Բազմաթիվ ձեռագրեր ձեռք են բերված գնման կարգով: Ըստ մեծ է Վեհափառ Հայրապետի նպաստը վանքի ձեռագրերի քանակի աճման գործում: Գրեթե ամեն անգամ

արտասահմանյան Հովվապետական շրջագայությունից հետո, Վեհափառ Հայրապետն Իր հետ Մայր Աթոռ է բերել արժեքավոր ձեռագրեր:

Մայր Աթոռի ձեռագրատան մատյանների առաջին 600-ի նկարագրությունը (№ № 1—600) լույս է տեսել Ս. Էջմիածնի մայրավանքի պաշտոնաթերթ էՋՄԻԱՇԻՆ ամսագրի վերջին 35 տարիների (1950—84 թթ.) պանապան համարներում, երբեմն որոշ ընդհատումներով: Այն շարունակվելու է, տալով նոր ստացված ձեռագրերի նկարագրությունը: Այժմ այստեղ կամենում ենք համառոտ տեղեկություններ տալ ձեռագրերի հերթական 7-րդ հարյուրյակի (601—700) մասին, ձեռագրեր, որոնց նկարագրությունը տրվելու է նույն պաշտոնաթերթի առաջիկա համարներում:

Ա. Այստեղ մենք ունենք Մայր Աթոռի միաբան Ասողիկ արքեպիսկոպոս Ղազարյանի (1909—78) օրագրության 19 մատյանները (№ № 601—610, 678 և 683—690), որոնք գրված են 1937—63 թթ. պանապան երկրների բազմաթիվ քաղաքներում, որտեղ ծառայել է հանգուցյալ Սրբապանը, որպես Հոգևոր Հովիվ, առաջնորդ կամ Հայրապետական պատվիրակ: Դրանք օրը-օրին գրված օրագրություններ են Չինաստանում, Հնդկաստանում, Հեռավոր Արևելքում, Ավստրալիայում, ԱՄՆ-ում և պանապան քաղաքներում (Երուսաղեմ, Ս. Էջմիածին և այլն): Ազգային, հասարակական և եկեղեցական բնույթի արժեքավոր նյութեր կան այս հատորներում: Ըստ արժեքավոր են հատկապես Չինաստանի բազում հայաբնակ և այլ քաղաքներում (Խարբին, Մուկդեն, Շանհայ, Դայրեն, Ցիցինբար, Սինչեն, Մանչուրիա, Հայլար, Սինքինկ և Պոխետոու) գրված մատյանները, որոնք բավականին հետաքրքիր տեղեկություններ են պարունակում 1937—48 թթ. չինահայ համայնքների մասին: (Պակասում է միայն 1942—43 թթ. մատյանը): Ըստ թերի կլիներ շարադրել այս տարիների Չինաստանի հայ գաղութի պատմությունը, առանց օգտվելու հեղինակի այս հատորներից: Չափապանց հետաքրքիր են հատկապես այն նոթերը, որոնք գրի են առնված Մուկդենում, 1944—45 թթ. հեղինակի ձապոնական համակենտրոնացման ձամբարում, գերության ժամանակաշրջանում:

Բ. Այստեղ պահպանված են Մայր Աթոռի միաբան Հայկապոն արքեպիսկոպոս Աբրահամյանի (1906—72) օրագրություններն ու ձեռագիր մյուս աշխատությունները, որոնք գրի են առնված 1944—66 թթ., առավելապես Երուսաղեմում և Հնդկաստանի պանապան քաղաքներում: Երուսաղեմում են գրված

Պատարագը (№ 621), Գիրք Սաղմուսացը (622), Կանոն Ծննդյանը (624), Տաղեր և մեղեդիները (625), Շարակնոցը (626), Ծխագիտությունը (627), Պատմություն աշխարհաբարին (628), Տետր խորհրդակատարությանը (630), Հոպպելյում (Յա.Ֆա) է գրված Կանոն Նոր Կիրակեին (623), իսկ Հնդկաստանում են գրի առնված շատ արժեքավոր մատյաններ՝ ձամբի նոթեր (629) և օրագրություններ (631—632): Այս վերջին երկուսը հատկապես շատ կարևոր տեղեկություններ են պարունակում հնդկահայ պատմական գաղութի հին և նոր եկեղեցիների ու գերեզմանատների, հոգևորականության ու գործիչների և այլ բազմաթիվ նյութերի մասին, որոնք արժեքավոր ատաղձ կարող են հայթայթել այդ գաղութի պատմությունը գրելու համար:

Գ. Այստեղ կան Մայր Աթոռի միաբան Նահապետ վարդապետ Մուրադյանի (1881—1959) վեց ձեռագրերը՝ Քարոսներ, Ինքնակենսագրություն, Ուսանավորներ և այլն, որոնք մեծ արժեք չեն ներկայացնում:

Դ. Պահպանվում են տասը արժեքավոր կոնդակներ 17—19-րդ դարերի կաթողիկոսների և այլոց: Կան Ներսես Աշտարակեցու 1845 թ. (634), Փիլիպպոս Աղբակեցու 1641 թ. (635), Ղուկաս Կարնեցու 1799 թ. (636), Հակոբ Ջուղայեցու 1660 թ. (638), Խրիմյան Հայրիկի 1895 թ. (666), Աղվանից Իսրայել հակաթոռ կաթողիկոսի 1764 թ. (667), Երուսաղեմի պատրիարքի 18-րդ դար (680), Լիմ անապատի վանահայր՝ Հարություն վարդապետի 1819 թ. (681), Լիմ և Կտոց անապատների վանահայրերի 1841 թ. (682) և Սիմեոն Երևանցու 1766 թ. (697) կոնդակները: Սրանցից մի քանիսը պատմական մեծ արժեք ունեն:

Ե. Այստեղ հավաքված են տասնչորս ուղերձներ (652—665), գրված 1893 թ. պանապան եկեղեցական ու հասարակական կազմակերպությունների կողմից և ուղղված Խրիմյան Հայրիկին, Նրա Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվելու առթիվ:

Չ. Այստեղ պահպանվում են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստերի արձանագրության ութ մատյանները (643—650), որոնք գրված են 1924—41 թթ.: Սրանք շատ արժեքավոր են իրենց բովանդակությամբ: Այստեղ արտացոլված է այդ տարիների Մայր Աթոռի ամբողջ գործունեությունն ու պատմությունը:

Ը. 620 համարի տակ գրանցված են պանապան տասներկու պատառիկներ, որոնք մեկ են հասել 15—19-րդ դարերի ձեռագրերից: Դրանք պատկանում են Մաշտոցների, Աղոթագրքի, Ավետարանի, Շարակնոցի և

կամ այլ բնույթի մատյանների: Դրանցից վեցը բավականին հին են, 15—17-րդ դարերից:

Ը. Յոթհարյուրյակի ձեռագրերից չորսը օտար լեզուներով են: 1802 թ. ֆիրմանը (637) պարսկերեն է, 1878 թ. ուղերձը (652) հունարեն, 19-րդ դարի համայնը (694) արաբերեն, իսկ 19-րդ դարի բանաստեղծությունների մատյանը (695) հայատառ պարսկերեն (Այժմ Մայր Աթոռի ձեռագրատանը կան հարյուրից ավելի մատյաններ, որոնք գրված են տասներեք օտար լեզուներով):

Թ. Վերոհիշյալ մատյաններից բացի կան նաև հետևյալ ձեռագրերը, որոնք բավականին արժեք ունեն.— Գիրք ձեռնադրության (614) 1438 թ., երկու Ավետարան (618) 16-րդ դարի և (696) 1683 թ., Դիոնեսիոս (613) 1662 թ., Դովագներ Հիսուսի կյանքից (615) 16—17-րդ դարերի, Կանոնագիրք (611) 18-րդ դարի, Տոմար հայոց (616) 18-րդ դարի, Աղոթագիրք (619) 1847 թ., երկու համայնի (679 և 694) 19-րդ դարի, կան նաև 20-րդ դարի ձեռագրեր:

Երեսունհինգ տարի առաջ Մայր Աթոռի ձեռագրատունն ուներ շուրջ հիսուն ձեռագիր, իսկ այսօր ունենք ավելի քան 850 միավոր, որով երեքուկես տասնամյակում 17 անգամ մեծացել է այդ ֆոնդը: Ձեռագրերի այս հավաքածուն հանդիսանում է

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անգին գանձերի մի մասը: Այստեղ կան ոսկյա երկու և արծաթյա կազմով բազմաթիվ ձեռագրեր, որոնց կազմերը հայ ոսկերչության և արծաթագործության հիանալի նմուշներ և իրական գանձեր են: Ունենք բազմաթիվ մատյաններ, որոնք պարունակում են մանրանկարչության և վարդանկարչության հիասքանչ նմուշներ, ներկայացնելով մեր բազմահարուստ մշակույթի գեղեցիկ մեկ երեսը:

Այս առթիվ հույս ենք հայտնում, հանուն Վեհափառ Հայրապետի, որ մեր սիրեցյալ Հայրենիքի և Սփյուռքի բարեպաշտ ժողովուրդն ու եկեղեցիներն իրենց լուսն կնուծեն՝ հարստացնելու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ձեռագրատունը, Նորին Սրբության անվան Մայր Աթոռ նվեր ուղարկելով մեր պապերից ձեռագիր ժառանգությունը: Նվեր ստացված յուրաքանչյուր ձեռագիր Մայր Աթոռում կպահվի, կվերանորոգվի և կինամվի ամենայն հոգատարությամբ ու ապահովությամբ, այն գրանցելով նվիրատուի անունով և նվերը հիշատակելով Մայր Աթոռի պաշտոնաթերթ ԷԶՄԻԱԾԻՆ ամսագրում:

Այսուհետև ևս պարբերաբար ամսագիրը կանդրադառնա Մայր Աթոռի ձեռագրերի մանրամասն նկարագրությանը:

Ն. ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

